

Հաստատված է՝ \_\_\_\_\_

Հայկական բժշկական ինստիտուտի  
գիտական խորհրդի 2017 թվականի  
օգոստոսի 29-ի նիստում  
ռեկտոր Սուշեղ Ասատրազյան



**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲՇՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

(վերահաստատված)

Հաստատված է՝ \_\_\_\_\_

Հայկական բժշկական ինստիտուտի  
գիտական խորհրդի 2017 թվականի  
օգոստոսի 29-ի նիստում  
ռեկտոր Մուշեղ Ասատրյան



(ստորագրություն)

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

### ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Ինստիտուտի կառավարման բարձրագույն մարմինն հանդիսանում է ինստիտուտի կառավարման խորհուրդը:
2. Կառավարման խորհրդի կազմի մեջ են մտնում հիմնադիր խորհրդի անդամները, ռեկտորը, պրոռեկտորները, դեկանները, ռեկտորի օգնականը, գլխավոր հաշվապահը, որակի ապահովման բաժնի ղեկավարը, վարչատնտեսական բաժնի ղեկավարը, ուսանողական կառույցների ղեկավարները:
3. Կառավարման խորհրդի աշխատանքները ղեկավարում է հիմնադիր խորհրդի նախագահը, որը ընտրվում կամ նշանակվում է հիմնադիր կանոնակարգին համաձայն:
4. Կառավարման խորհուրդը իրականացնում է ինստիտուտի գործունեության նկատմամբ վերահսկողություն:
5. Կառավարման խորհուրդը կարող է կասեցնել ինստիտուտի ռեկտորի հրամանները, կարգադրությունները, հրահանգները, եթե նրանք հակասում են ՀՀ օրենսդրության պահանջներին կամ ինստիտուտի շահերին:
6. Կառավարման խորհուրդը վերահսկողություն է իրականացնում ինստիտուտի սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման և պահպանման նկատմամբ:
7. Կառավարման խորհուրդը համաձայնություն է տալիս սեփականություն հանդիսացող գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար:
8. Կառավարման խորհուրդը վերահսկում է ինստիտուտի ծախսերի նախահաշիվը:
9. Կառավարման խորհուրդը վերահսկում է ինստիտուտի ֆինանսատնտեսական գործունեությունը:
10. Կառավարման խորհուրդը լսում է ինստիտուտի գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրանց գործունեության վերստուգման արդյունքները:
11. Կառավարման խորհուրդը սահմանում և իրականացնում է ռեկտորի ընտրությունների ընթացակարգը:

12. Կառավարման խորհուրդը համակարգում է ինստիտուտի արտոնագրման և հավատարմագրման գործընթացը:
13. Կառավարման խորհուրդը քննարկում է հանրապետության հասարակական, քաղաքական, կրթական կյանքին և կարևորագույն իրադարձություններին վերաբերող հարցեր:
14. Կառավարման խորհուրդը քննարկում է ինստիտուտի հեռանկարային զարգացման ծրագրեր՝ շինարարական, ուսումնագիտական, սոցիալկենցաղային, ինստիտուտի նյութատեխնիկական հագեցվածության խնդիրներ:
15. Կառավարման խորհուրդը նպաստում և աջակցում է ինստիտուտի համագործակցությանը հանրապետական և միջազգային կրթական հաստատությունների և այլ կառույցների հետ:
16. Կառավարման խորհուրդը ներկայացնում է ինստիտուտի շահերը տարբեր կազմակերպություններում:
17. Կառավարման խորհուրդը կարող է հարցի քննարկումը տեղափոխել գիտական խորհրդի նիստի:
18. Կառավարման խորհրդի նիստերը իրականացվում են համաձայն հաստատված աշխատակարգի և հիմնադիր խորհրդի կանոնակարգի ոչ ուշ քան ամիսը մեկ, ոչ շուտ քան շաբաթը մեկ /ըստ իրավիճակի/: